

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՊՐՈՖԵՍՈՐ ՍԻՐԱՐՓԻ ՏԵՐ ՆԵՐՍԵՍՅԱՆԻՆ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՔԱՆՇԱՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՎԱՋԳԷՆ ԾԱՌԱՑ ՑԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱՋԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱՋԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՊՐՈՖԵՍՈՐ ՍԻՐԱՐՓԻ ՏԷՐ ՆԵՐՍԷՍԵԱՆԻՆ, ՀԱՐԱՋԱՏ ԴՍՏԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ, ՈՂՋՈ՛ՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻ՛Ն ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Ի՜նչ մեծ ուրախություն է Մեզ համար հաստատել, թե մոտ կես դար առաջ անդունդի եզրին հասած մեր ժողովուրդը, այսօր ոչ միայն վերածնած է և իր Մայր Երկիրը կվերաշինե զմայլանքի արժանի թափով, այլև մեր նախնյաց հանճարի լույսը վերստին ծագած, կշողա Հայաստան աշխարհի վրա, մեր շատ զավակներուն կյանքին ու գործին մեջ:

Եվ ավելին տակավին, Հայրենի հողի վրա աճող ու զարգացող մեր գիտնականներու և արվեստագետներու կողքին, կանին ու կզարգանան տաղանդաշատ մշակներ նաև Սփյուռքի հայության ծոցին մեջ, որ անբաժանելի և հարազատ մասն է Հայաստանյայց:

Դուք Ձեր վաստակով կհանդիսանաք մին այդ ստեղծագործ մշակներեն և շատոնց ի վեր Ձեր անունը կփայլի հայ գիտության և կյանքին երկնակամարին վրա:

Հայոց հին մշակույթի, յատկապես մատենագիտության և մանրանկարչության կալվածին մեջ, Ձեր աշխատությունները մնայուն գործեր են և մնայուն արժեքներ՝ հայագիտության համար: Ձեր ամբողջ կյանքը և գործունեությունը արտասահմանի գիտության մեծ կեդրոններու մեջ, թանկագին ընծա մըն է՝ մատուցված հայ մշակույթին և հայ ժողովուրդին:

Մխիթարական է Մեզ համար հաստատել նաև, որ Դուք հավատարիմ զավակն եք մեր Ս. Եկեղեցիին և հարազատ Ս. Էջմիածնին, որուն հանդեպ

Ձեր ունեցած պաշտամունքի զգացումը լուսապսակը կկազմե Ձեր գիտական գործունեության:

Փրկչի Իշման Ս. Սեղանեն ողջո՛յն և օրհնությո՛ւն Ձեր կյանքին և Ձեր գործին: Եվ, իբրև հայրապետական գնահատանք, ընդունեցե՛ք Մեզմե Ս. Դրիգոր Լուսավորչի առաջին կարգի շքանշանը և կրեցե՛ք զայն Ձեր կուրծքին վրա երկար, երկա՛ր տարիներ, քաջառողջությամբ, խաղաղությամբ: Թող Տերը միշտ լուսավորե Ձեր միտքն ու հոգին և պարգևե Ձեզ աշխատանքի անսպառ հոսանք, որպեսզի շարունակեք Ձեր գիտական հայրենասիրական մեծ առաքելությունը՝ ի փառս հայ մշակույթի և ի փառս Հայ ազգի:

«Ողջ լերուք, զօրացեալ ի Հոգին Սուրբ և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ: Ամեն»:

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 29-ն նոյեմբերի
1960 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԺ,
ի վանս Սրբոյ Էջմիածնի: